ԲԱՌԱՐԱՆ

Ա.

ԱԳԵՍՏԷ, կամ ԱՔԵՍՏԷ, մ. հ. , Այգեստանէ ? Ագեստէ քաղաք ես դու – (թերեւս ալ՝ ա. ահեսթէէն, մեղմօրէն, յուշիկ):

ԱԶԻԶ, կամ ԷԶԻԶ, մ. հ. եւ Ա. բ. , ա. ազիզ, ազնիւ սիրելի:

ԱԼ, պ. կարմրագոյն:

ԱԼԱՄ, ա. ալէմ, աշխարհ, աշխարհի մէջ գտնուող բոլոր արարածները. բերեմ ի վըրայ, աշխարհը գլխուս հաւաքեմ:

ԱԼԱՆԻ, ա. յայտնի, ակներեւ, բացէ ի բաց, համարձակ:

ԱԼԸՆԴԱՆ, մ. հ., այլ դի, ուրիշ կողմ:

ԱԼԷՄ, տես ԱԼԱՄ:

ԱԼԻ, մ. հ., 1. Ալիք, 2. ԱԼԻ կամ ԱԼ, Ծովային ոգի (ondin):

ԱԼՎԱ, ԱԼՎԻ, ԱՅԼՎԻ, ԱՅԼՎԱՅ, մ. հ., նորէն:

ԱԽԻԿ, Ա. բ., նիգ, կղպանք:

ԱԽՊԱՐ, Ա. բ., եղբայր:

ԱՀԷՆՔ, պ. մագնիս:

ԱՀՈՒԶԱՐ, պ., ահ ու զար, ողբուկոծ:

ԱՂԲԱԹ, ա. ղապաթ բառէն, նախանձ ?: Ստեփաննոս Տէր Սարգսեանց, Խ. ԱԲՈՎԵԱՆԻ ԵՐԿԵՐԸ, բառաթերթ, աղբաթ, հանգամանք, նպատակ, վախճան:

ԱՂԲԵՐԱՑ ԱՐՈՒՆ, կամ ԱՂԲԵՐԱՆՑ ԱՐԻՒՆ, մ. հ. ծաղկի մը անուն («ծաղիկ ինչ կարմրաւուն թերթիկներով», Գ. Շէրենց, ՎԱՆԱՅ ՍԱԶ, երկրորդ մաս):

ԵՂԷԿ, ԱՂԿԷԿ, մ. հ., գեղեցիկ, գեղուհի:

ԱՂՈՒԾ ՄԱՂՈՒԾ, մ. հ., աղուոր, փափուկ:

ԱՃԱՊ, ԱՃԱՓ, մ. հ., աճապ, 1. արդեօ՞ք: 2. զարմանալի

բան, Այս ի՞նչ աճապ է, 3. ա. աճայիպ, յաճապ, յաճապս (գալ), մ. հ., զարմանալ, ապշիլ, յանկարծակիի գալ:

ԱՃԱՐ, մ. հ., ոճոռք, առիք ?. թեպուրն այն տաճրին աճար:

Ա՛Մ, մ. հ. զարմացական բացագանչութիւն:

ԱՄԱՆԱԹ, ԱՄԱՆԷԹ, ա. աւանդ, աւանդ ձգել, վստահեցնել:

ԱՄԱԼ, ԱՄԷԼ, արարք, գործ:

ԱՄԲԱՐԻՆԱՅ, ամպար, յամպար, ambre:

ԱՄՉՆԷ, Ա. բ., ամչցիր: